ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐԳՈՒՅՔԻՊԵՏԱԿԱՆԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԱԱԻ-ՄԱԱՊՁԲ-20/1»

ք. Երևան «19» «02 » 2020 թ.

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Բազարչյանի, որը գործում է «Կանոնադրության» հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Արգավանդ կահույք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Վ. Նարիբեկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/սահմանված կարգով, ծավալներով և գնմանժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդի նկամնրակողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկականբնութագրով նախատեսված տնտեսական ապրանքներ /այսուհետ՝Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ)հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների

միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

3.1.8 Ձնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետնախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 750000(Յոթ հարյուր հիսունհազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունչի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները. բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից _5օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: 6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը[1]:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տուժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրմանպահից և գործում է մինչև Կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝
կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարեցվել այլ պայմանագրից ծագած՝
հակընդդեմ պարտավորության հաշվանցով,
առանց կողմերի գրավոր և կնքված համաձայնության:
Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի,
առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը: Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում

է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են: Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար ազդեցություն, յուրաքանչյուր կողմ ինտրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱՆ <<Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ>>ՓԲԸ	<<Արգավանդ Կահույք>> ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 49/4	Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ գ.Արգավանդ
ՀՎՀՀ՝ 00011624	
Բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>>Արաբկիր մ/ճ	Բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>>ՓԲԸ Մետաքս մ/ճ
հ/հ 163058101441	ՀՀ 163218020242
	ՀՎՀՀ 01261634
Տնօրեն Ա.Բազարչյան	Տնօրեն Վ.Նարիբեկյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1

«19»«02»2020 թ. կնքված

N «ԱԱԻ-ՄԱԱՊՁԲ—20/1»ծածկագրով գնման պայմանագրի

ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆԲՆՈՒԹԱԳԻՐ և ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ	Անվանում	Տեխնիկական բնութագիր	Չափի միավոր	Մատակարարված քանակ	Առաջարկված գին	Ընդամենը գումար
1	Աթոռ գրասենյակային	Կառուցված է մետաղական հենքի վրա, նստատեղը և հենակը փափուկ, պաստառապատված սինթետիկ կտորով: Ստանդարտ չափերի: Գույնը՝ 20 հատկապույտ, 80 հատ սև:	հատ	100	7500	750000
	Ընդամենը					750000

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ <<Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ>>ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 49/4
ՀՎՀՀ՝ 00011624
Բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>>Արաբկիր մ/ճ
հ/հ՝ 163058101441

Տնօրեն
Ա.Բազարչյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

□Արգավանդ Կահույք□ ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ գ.Արգավանդ
Բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>>ՓԲԸ Մետաքս մ/ճ
ՀՀ 163218020242
ՀՎՀՀ 01261634

Տնօրեն Վ.Նարիբեկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 2
«19» 02 2020թ. կնքված
«ԱԱԻ-ՄԱԱՊՁԲ—20/1»ծածկագրով պայմանագրի

Պատվիրատու
ՀՀ ԱՆ <<Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ>>ՓԲԸ
Հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 49/4
ՀԿՀՀ՝ 00011624
Բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>>Արաբկիր մ/ճ
հ/հ՝ 163058101441

Պայմանագրի կողմ
<<Արգավանդ Կահույք>>ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ.Արգավանդ
Բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>>ՓԲԸ Մետաքսամ/
ՀՀ 163218020242
ՀԿՀՀ 01261634

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄԴ ԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«19» «02»2019թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքմանամսաթիվը՝ «19□«փետրվար» 2020թ.
Պայմանագրի համարը՝ «ԱԱԻ-ՄԱԱՊՁԲ-20/1»Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «19» «02» 2020թ. դուրս գրված N Ա6786325856 և Ա 5440722281հ աշխիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
	Աթոռ գրասենյակային	Կառուցված է մետաղական հենքի վրա, նստատեղը և հենակը փափուկ, պաստառապատված սինթետիկ կտորով: Ստանդարտչափերի: Գույնը սև:	100	100	19.02,2020թ	19.02.2020թ	750000	750000

Սույն արձանագրությաներկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրը ևդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

19» 02 2020թ. կնքված